

վիրահատական միջամտություն կրած դեռահասների ձվարանային պահուստն ուսումնասիրելիս հեղինակը եզրահանգել է, որ ձվարանի վրա կատարվող վիրահատությունը բացասական ազդեցություն է թողնում ձվարանային հյուսվածքի և պահուստի վրա՝ առավելապես բաց որովայնահատման դեպքում: Արդյունքում առաջարկվել է ձվարանի առողջ հյուսվածքի պահպանման նպատակով նախընտրությունը տալ որակավորված վիրաբույժի կողմից լապարոսկոպիկ մուտքով կատարվող վիրահատությանը:

Ձվարանային պահուստի ցուցանիշները զգալիորեն տարբերվում էին ձվարանի գոյացության և ձվարանի վրա կատարված վիրահատության դեպքում, ինչը հեղինակին բերեց այն եզրահանգման, որ վիրահատությունն ինքնին բացասական ներգործություն ունի ձվարանային հյուսվածքի և պահուստի վրա: Այդ նպատակով հեղինակն առաջարկել է վիրահատությունը ձվարանի հյուսվածքի վրա կատարել խիստ ցուցումով, իսկ արդեն վիրահատական միջամտություն կրած դեռահասների ձվարանային պահուստի հսկողության համար մշակել է վարման ալգորիթմ:

Դեռահասի արտասեռական և գինեկոլոգիական հիվանդությունների, սոցիալ-տնտեսական կարգավիճակի մանրամասն վերլուծության արդյունքում՝ վիճակագրական վերլուծության հիման վրա, հեղինակը հանգել է այն եզրակացության, որ վահանաձև գեղձի հորմոնալ և գործիքային հետազոտությունը դեռահասի կանոնավոր ֆիզիկական զննման կարևորագույն բաղադրիչն է, իսկ վերոնշյալ հիվանդությունները նախատրամադրող գործոններ են վերարտադրողական տարիքում ցածր ձվարանային պահուստի համար:

Վիճակագրական վերլուծության հիման վրա իրականացվել է դեռահասների կյանքի որակի ֆիզիկական ու մտավոր բաղադրիչների վրա ազդող գործոնների հետազոտություն: Ստացված տվյալների հիման վրա հեղինակը եզրակացրել է, որ ձվարանի վրա վիրահատական միջամտություն կրած և ձվարանի գոյացություն ունեցող դեռահասների շրջանում տուժում է կյանքի որակի ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական բաղադրիչը:

Հետաքրքրություն է առաջացնում նաև վերարտադրողական ֆունկցիայի, հղիության հետաձգման դեպքում հնարավոր ռիսկերի մասին քննարկումները ռեպրոդուկտիվ հետ: «Կենսաբանական ժամացույցի» ճիշտ գնահատումից հետո